ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
18.05.2023 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59
գնման պայմանագրի

ք. Երևան «04» «04» 2024թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Աղագուլյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 18.05.2023 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության 28.03.2024 թվականի թիվ Ն/16784-24 գրության կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1.Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևանի Բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման** աշխատանքների համար 2024 թվականի կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 2 168 559 000 (երկու միլիարդ հարյուր վաթսունութ միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրով նախատեսված իրականացվելիք աշխատանքների գնի մնացած գումարի մասով՝ 2 095 193 507 (երկու միլիարդ իննսունհինգ միլիոն հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր յոթ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն վճարումը կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի 2024 թվականի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

1.4 Հաստատել սույն համաձայնագրի 2024 թվականին կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը ՝ համաձայն հավելված թիվ 2-ի:

1.5 Պայմանագրով նախատեսված 2024 թվականին կատարվելիք աշխատանքները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված են 3 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Ք.Երևան, Շիրակի 47/3
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1510036354070100
ՀՀ 900011045524	ՀՎՀՀ 01529053
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Ա.Աղագուլյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
18.05.2023թ. կնքված թիվ ԵՔ- ԲՄԱՇՁԲ-23/59 պայմանագրի
«04» «04» 2024 թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հր ավերովնա խատես-վածչափաբ աժնիհամա ը	Գնում ներիպլանովն ախատեսվածմ իջանցիկծածկ ագիրը՝ ըստԳՄԱդաս ակարգման (CPV)	Գնմանենթակ ածառայությունների անվանումը	Աշխատանքներիդիմացվճարումներընախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստամիսների, այդթվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	45221142/556	Երևանի Բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման աշխատանքներ	.....	.....	.....	900000000	900000000	900000000	1000000000	1000000000	1000000000	2168559000	2168559000	2168559000	2168559000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900011045524
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Ք.Երևան, Շիրակի 47/3
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510036354070100
ՀՎՀՀ 01529053

Ա.Աղագուլյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
18.05.2023թ. կնքված թիվ ԵՔ- ԲՄԱՇՁԲ-23/59 պայմանագրի
«04» « 04 » 2024թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
2024թ.

No	Կապալառուիկողմիցկատարվելիք աշխատանքներիանվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
	Երևանի Բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման աշխատանքներ	Շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերը ուժի մեջ մտնելուց հետո	Մինչև 260-րդ օրացուցային օրը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900011045524
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 47/3
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510036354070100
ՀՎՀՀ 01529053

Ա.Աղագուլյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

AraratBank

№ 1690/08
«01» 04 2024թ

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 18.05.2023թ.-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրով (այսուհետ՝ համաձայնագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 976,602,483 (ինը հարյուր յոթանասունվեց միլիոն վեց հարյուր երկու հազար չորս հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000698 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև 18.05.2023թ.-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025թ.-ի մայիսի 07-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) 18.05.2023թ.-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից համաձայնագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ Մ.Անանյան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ · ARARATBANK OJSC · 02500518

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
0002, ՀՀ, ք Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք

AraratBank

№ 1691/08
«01» 04 2024թ

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԲԻԼԴԵՐ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 18.05.2023թ.-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 325,534,161 (երեք հարյուր քսանհինգ միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար մեկ հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև 18.05.2023թ.-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2026թ.-ի մայիսի 07-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) 18.05.2023թ.-ին կնքված N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/59» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքվելիք թիվ 2 համաձայնագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից համաձայնագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն **Մ.Անանյան**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՕԱՕ · ARARATBANK OJSC · 02500518

(+374)10 59 23 23 | info@araratbank.am | araratbank.am
0002, ՀՀ, ք Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք